ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 5-ին, կիրակի.-Տօն Երեւման Ս. Խաչին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Վռամ աբդ. Ղազարյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Մայիսի 12-ին, կիրակի.-Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաջարյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Մայիսի 16-ին, հինգշաբթի.-Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Շահե արքեպս Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Մայիսի 19-ին, կիրակի.-Երկրորդ ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաջարյանը: Պատարագի ընթացքում կատարվեց սարկավագական ձեռնադրություն ձեռամբ գերշ. Տ. Անանիա եպս. Արարաջյանի, որից հետո սրբազան հայրը խոսք ուղղեց նորընծա սարկավագներին և ներկա հավատացյալներին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Մայիսի 26-ին, կիրակի.- Հոգեգալուստ /Պենտեկոստէ, լիսներորդ օր ի Զատկէն/:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց: /Տես էջ 91/:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Հունիսի 2-ին, կիրակի: Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Պատարագի ընթացքում կատարվեց քահանայական ձեռնադրություն ձեռամբ պատարագիչ սրբազան հոր: /Տես էջ 104/:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***

Հունիսի 9-ին, կիրակի.- Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց: /Տես էջ 155/:

***

Հունիսի 16-ին, կիրակի: Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի միաբան Տ. Էմանուել աբդ. Աթաջյանը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

***

Հունիսի 23-ին, կիրակի: Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրեզնոյի հոգևոր հովիվ Տ. Սասուն վրդ. Զմրուխտյանը: Պատարագի ընթացքում կատարվեց վարդապետական չորս աստիճանի տվչություն ձեռամբ Վեհափառ Հայրապետի:

Հավարտ տվչության Վեհափառ Հայրապետը իր պատգամն ուղղեց նորընծա վարդապետներին: /Տես էջ 132/:

***

Հունիսի 30-ին, կիրակի.- Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը և «Հայր մեր»-ից առաջ հանգամանալից քարոզ խոսեց:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: